

**ՖԱԹՎԱՆ՝ ՈՐՊԵՍ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ  
ՊԱՏԵՐԱԶՄԻ ԳՈՐԾԻՔ**

**(Միրիական ճգնաժամի օրինակով)**

*Նաիրա Մահակյան*

*Բանալի բառեր՝ ֆաթվա, տեղեկատվական-հոգեբանական  
պատերազմ, Միրիական ճգնաժամ, մուֆթի*

*Հողվածի նպատակն է ներկայացնել ֆաթվան<sup>1</sup> (fatwā<sup>2</sup>) որպես  
տեղեկատվական-հոգեբանական<sup>3</sup> պատերազմի գործիք:*

*Հողվածում ներկայացվում է ֆաթվայի ինստիտուտը, դրա  
զարգացման և աստիճանաբար պատերազմական գործիքի*

<sup>1</sup> Ֆաթվան կրոնական կամ քաղաքացիական տարբեր կոնկրետ և պրակտիկ իրողությունների հետ կապված իսլամական տեսակետը ներկայացնող եզրահանգումն է, որն ունի խորհրդակցական բնույթ և պարտադիր չէ կատարման համար: (Տե՛ս Տոնիկյան Ս., «Ֆաթվան որպես իսլամական իրավունքի ադապտացիոն մեխանիզմ», Արևելագիտության հարցեր VII, Երևան, ԵՊՀ, 2012, էջ 16: Ֆաթվա տալու գործընթացը կոչվում է իֆթա (iftā'), այն անձը ով ֆաթվա է տալիս կոչվում է մուֆթի, իսկ ֆաթվայի հարցը տվողը՝ մուսթաֆթի (mustafti): (Տե՛ս Ислам. Энциклопедический словарь. М.: «Наука», Главная редакция восточной литературы, 1991, стр. 252-253. (Այսուհետ՝ Ислам. Энциклопедический словарь)): Ֆաթվան ունի հստակ կառուցվածք: Այն կազմված է հարցից (su'al, istifta')՝ ուղղված մուֆթիին (պարզաբանում տվող աստվածաբան-իրավագետ) և վերջինիս տված պատասխանից (jawab): Թուղթը, որի վրա գրված է հարցը (եթե այն գրավոր է) կոչվում է ruq'at al-istifta' կամ kitab al-istifta', երբ նրա վրա գրվում է նաև պատասխանը, այն անվանվում է ruq'at al-fatwa: Ֆաթվան սկսվում է բիսմիլլահով (Բարեգութ և զթասիրտ Աստծո անունով) և ավարտվում «ուա Ալլահու յա՛լլան» (և Աստված զիտի) ֆորմուլայով: (Տե՛ս Տոնիկյան Ս., Նշվ. աշխ., էջ 20):

<sup>2</sup> Տառադարձման այբուբենն ըստ IJMES-ի (International Journal of Middle East Studies):

<sup>3</sup> Ես նշում եմ *տեղեկատվական-հոգեբանական* ձևը և չեմ առանձնացնում տեղեկատվական և հոգեբանական պատերազմները, քանի որ ֆաթվաներով տրվող ինֆորմացիան ունի կրոնական հիմքեր, ինչն իր հերթին ապահովում է նաև հոգեբանական ազդեցությունը: Այս իսկ պատճառով ֆաթվաների համակարգի ազդեցությունը բնութագրել որպես միայն տեղեկատվական, կամ միայն հոգեբանական մեր կարծիքով ընդունելի չէ, քանի որ այս երևույթների առանձնացումը թույլ չի տալիս ամբողջական ներկայացնել երևույթի ազդեցությունը և դրա հետևանքները:

*վերածվելու ուղին, ապա Սիրիական ճգնաժամի ընթացքում ջիհադի կոչ պարունակող որոշ ֆաթվաների օրինակով ֆաթվան ներկայացվում է որպես տեղեկատվական-հոգեբանական պատերազմի իսլամական տարատեսակ:*

Մերձավոր Արևելքում 2010 թվականի վերջին սկիզբ առած տրանսֆորմացիոն գործընթացներն ու այդ համատեքստում Սիրիական ճգնաժամը մի շարք մուֆթիների<sup>4</sup> (mufti) կողմից բազմաթիվ ֆաթվաներ տալու առիթներ ստեղծեց: Ամենատարբեր բովանդակությամբ այս ֆաթվաները ցույց տվեցին, որ արդի իսլամական աշխարհի խռովությունների համատեքստում ֆաթվան լուրջ պատերազմական գործիք է դարձել:

Մուֆթիի ինստիտուտի զարգացումն ու ֆաթվա տալու պրակտիկան հաճախ կապվում է Մուհամմադ մարգարեի մահից հետո ստեղծված իրադրության հետ, սակայն ֆաթվաների ծագման վերաբերյալ այլ տարբերակ էլ կա, ըստ որի՝ ֆաթվայի նախահիմքերը պետք է փնտրել Ղուրանում: Մասնավորապես՝ Ղուրանի 16-րդ սուրայի 43-րդ այաթում ասվում է. «Հարցրե՛ք հաֆեզ մարդկանց (ովքեր գիտեն Ղուրանը-Ն.Ս.), եթե դուք չգիտեք»: Արաբագետ Ս. Տոնիկյանն իր «Ֆաթվան՝ որպես իսլամական իրավունքի ադապտացիոն մեխանիզմ» հոդվածում նշում է, որ «Ղուրանում ֆաթվա (فتوى) բառի բայարմատը հանդիպում է افتى (պարզաբանում տալ) կամ استفتى (պարզաբանում հայցել) բայաձևերով», ապա ավելացնում է, որ այս բայաձևերը «...հանդիպում են ա) Յուսուֆ (Հովսեփ) մարգարեի՝ փարավոնի

---

<sup>4</sup> Մուֆթիի շարիաթի գիտակն է, ով պարզաբանումներ է տալիս դրա հիմնական դրոյթներին ու ֆաթվայի տեսքով որոշումներ է կայացնում: (Տե՛ս Ислам. Энциклопедический словарь, стр. 177)

երազի մեկնաբանման հայտնի սյուժեում և բ) կանանց և նրանց ժառանգության իրավունքի առնչությամբ»<sup>5</sup>:

Մարգարեի մահից հետո ֆաթվա էր կոչվում առաջին չորս խալիֆաների կողմից որևէ հարցի վերաբերյալ տրված բացատրությունը: Հետագայում ֆաթվան դառնում է հեղինակավոր ֆակիհի (faqih) կարծիքը՝ ձևավորված անհատական մշակման, մտորման արդյունքում: Այս ժամանակ դեռևս ֆաթվաներ տալիս էին Մուհամմադ մարգարեի զինակիցներն ու հեղինակավոր աստվածաբան-իրավագետները:

Օմար 2-րդ խալիֆի (717-720թթ.) կառավարման ժամանակ Եգիպտոսում մուֆթի է նշանակվել հենց խալիֆայի կողմից: Սա իշխանության կողմից մուֆթի նշանակելու առաջին դեպքն է և հստակորեն ցույց է տալիս, որ արդեն 8-րդ դարի սկզբին գիտակցվում էր մուֆթիի ինստիտուտի կարևորությունը և դրա օգտագործման լայն հնարավորությունը: Այս ժամանակ է, որ տեղական կառավարիչները սկսեցին նշանակել կամ հրավիրել մուֆթիներին իրենց մոտ ծառայության: Այս մուֆթիների ֆաթվաները պարտադիր էին դառնում տվյալ տարածաշրջանի բնակչության համար: Պետությունում կամ որևէ տարածքում կարող էին լինել մեկից ավելի մուֆթիներ: Նման դեպքում նրանցից մեկը դառնում էր գլխավոր մուֆթի և կարող էր բողոքարկել մյուս մուֆթիների ֆաթվաները: Օսմանյան կայսրությունում 15-րդ դարում Ստամբուլի գլխավոր մուֆթին դարձավ Մեծ Մուֆթի ողջ երկրի համար և կրում էր Շեյխ ալ-Իսլամ կոչումը<sup>6</sup>:

<sup>5</sup> Տոնիկյան Ս., Նշվ. աշխ., էջ 17:

<sup>6</sup> Walsh J. R., "Fatwā" The Encyclopedia of Islam (ed. by B. Lewis, Ch. Pellat and J. Schacht) Vol. 2, Leiden, E.J. BRILL, 1991, p. 866-867 և Hamid Algar "Fatwā," Encyclopædia Iranica, online edition, 2012: Տե՛ս՝ <http://www.iranicaonline.org/articles/fatwa> (մուսը՝ 16. 05.2014)

Մուֆթիի կողմից ֆաթվաները տրվում են այն կոնկրետ իրավիճակներում, որոնց վերաբերյալ Ղուրանում և սուննայում հստակ ցուցում չկա: Պարզաբանումները դուրս են բերվում վերոնշյալ երկու աղբյուրների հիման վրա՝ ընդհանուրից դեպի մասնավորը տանող տրամաբանական եզրահանգմամբ: Այդ եզրահանգումները հետագայում կարող են նախատիպ հանդիսանալ նմանատիպ իրավիճակներում կողմնորոշվելու համար<sup>7</sup>:

Ֆաթվաների ճկուն համակարգը թույլ է տալիս այն օգտագործել բազմաթիվ իրադրություններում մարդկանց վրա ազդելու, երբեմն որոշակի քայլերի դրդելու համար՝ դրանով իսկ դառնալով տեղեկատվական-հոգեբանական պատերազմների գործիք:

Մարդկության պատմությունը կարելի է ներկայացնել որպես հազարավոր պատերազմների մի ամբողջություն: Պատերազմների պատմության այս ողջ ընթացքում մշտապես օգտագործվել են հակառակորդին վնասելու նաև տեղեկատվական-հոգեբանական մեթոդներ, սակայն պատերազմների այս տեսակը՝ որպես առանձին պատերազմական ձև, առաջնային դարձավ միայն 20-րդ դարում: Այս հանգամանքն ուներ իր մի քանի պատճառները.

- Երկրորդ աշխարհամարտը ցույց տվեց, որ հակառակորդի վրա ազդելու ֆիզիկական ձևերը չափազանց ծախսատար են,

- գիտա-տեխնիկական զարգացումն ու զանգվածային ոչնչացման զենքերի ստեղծումը կասկածի տակ դրեցին լայնամասշտաբ պատերազմների նպատակահարմարությունը<sup>8</sup>:

---

<sup>7</sup> Տոնիկյան Ս., նշվ. աշխ., էջ 17:

<sup>8</sup> Психологическая война: история понятия. Տե՛ս <http://psyfactor.org/opsywar4.htm> (մուտք 16.05.2014).

Լայնամասշտաբ տեղեկատվական-հոգեբանական պատերազմներ վարելու հնարավորությունն անմիջականորեն կախված է տեղեկատվական-քարոզչական մեքենայի զարգացվածությունից: 20-րդ դարն այս տեսակետից բեկումնային էր: Արդեն 20-րդ դարի վերջին քառորդին այս ինֆորմացիան թե՛ տնտեսական հարաբերությունների, և թե՛ ռազմական գործողությունների ընթացքում օգտագործելու լայն հնարավորություններ ստեղծվեցին<sup>9</sup>:

Ռազմարվեստի այս նվաճումները, բնականաբար, սկսեցին օգտագործվել նաև անկայուն Մերձավոր Արևելքի ճնշող մեծամասնություն կազմող մուսուլմանների կողմից: 20-րդ դարի երկրորդ կեսը և 21-րդ դարը նշանավորվեցին իսլամի մի շարք ինստիտուտների նորացմամբ ու ժամանակի տված հնարավորություններին ադապտացվելով: Այս ինստիտուտներից է նաև մուֆթիի ինստիտուտը: Հասարակության մեջ տեղի ունեցող փոփոխությունները, կոմունիկացիոն կապերի նորագույն մեթոդները իսլամական հասարակությունը ևս դարձրեցին տեղեկատվական հասարակություն<sup>10</sup>:

Տեղեկատվական հասարակությունն իր հերթին նորովի ներկայացրեց տեղեկատվական պատերազմները<sup>11</sup>: Որպես կանոն կիրքեպատերազմներն առավել ակտիվանում են, երբ առկա է ոչ վիրտուալ, իրական բախում, ինչպիսին, օրինակ, Սիրիական ճգնաժամն է:

Նոր՝ տեղեկատվական հասարակության ձևավորումը թույլ տվեց մուֆթիներին առավել լայն լսարան գտնել իրենց

---

<sup>9</sup> Waltz E., Information warfare: principles and operations, Artech House Publications, Boston and London, 1998, p. 2.

<sup>10</sup> Лисичкин В.А., Шелепин Л.А. Война после войны: Информационная оккупация продолжается»: Эксмо, Алгоритм; М.; 2005, стр. 7-11.

<sup>11</sup> Libicki M. C., Conquest in Cyberspace: National Security and Information Warfare, Cambridge University Press, 2007, pp. 15-16.

Ֆաթվաների համար, որն էլ հանգեցրեց ֆաթվաների նշանակության ու դերի փոփոխությանը: Ֆաթվան սկսեց կիրառվել ոչ միայն որպես բացատրող, մեկնաբանող մի երևույթ, այլ նաև լայն զանգվածների վրա ազդելու, նրանց նպատակադրված որևէ գործողության ուղղորդելու գործիք:

Ի սկզբանե ֆաթվաների պրակտիկան առավել իրադարձային է եղել, վերաբերել է կոնկրետ դեպքերի, ներառել է հարցերի առավել նեղ շրջանակ: Բացի այդ՝ մուֆթին չէր գտնվում պետական հսկողության տակ<sup>12</sup>, սակայն հետագայում այս ինստիտուտը սկսեց օգտագործվել պետապարատի կողմից որոշակի նպատակների համար<sup>13</sup>:

Ֆաթվաների տարածման գործիքների զարգացումը, այն է՝ ռադիոն, հեռուստատեսությունը, և, հատկապես, համացանցը, թույլ են տվել ֆաթվաներին առավել լայն, գլոբալ հարցերի վերաբերել՝ դրանով իսկ ընդլայնելով լսարանն ու ազդեցության գոտին:

Ֆաթվան դարձել է նոր զենք ներիսլամական պատերազմների համար, որը ոչ միայն տեղեկատվական գործիք է, այլև հոգեբանական<sup>14</sup> ազդեցության հզոր զենք:

Ֆաթվաների՝ մասս-մեդիայի միջոցով տարածելը սկսվել է դեռևս անցած դարում: Վառ օրինակ է Եմենում 1980-ականներին 4 մուֆթիների կողմից ստեղծված «Ֆաթվա-ծրագիր» ռադիոհաղորդումը: Այս դեպքում մուսթաֆթիներն իրենց հարցերն ուղարկում

<sup>12</sup> Fareed M. G., "Mufti" Encyclopedia of Islam and the Muslim World (ed. Richard C. Martin) Vol. 1, Macmillan Reference USA, New York, 2004, p. 478.

<sup>13</sup> Walsh J. R., "Fatwā" The Encyclopedia of Islam (ed. by B. Lewis, Ch. Pellat and J. Schacht) Vol. 2, Leiden, E.J. BRILL, 1991, p. 866-867.

<sup>14</sup> Հոգեբանական ազդեցությունը մարդկանց վրա այն ազդեցությունն է, որն իրականացվում է նրանց գիտակցության և ենթագիտակցության հոգեբանական և կառուցվածքային փոփոխման համար, էմոցիոնալ, գաղափարական վիճակի փոփոխման, որոշակի տեսակի վարքագծի խթանման և այլնի համար:

էին փոստի միջոցով, իսկ մուֆթիներն ի պատասխան այդ հարցերի՝ ռադիոյով տալիս էին համապատասխան ֆաթվաները<sup>15</sup>:

Հարմարվելով փոփոխվող ժամանակներին՝ «իֆթա»-ի ինստիտուտը շարունակում է պատասխաններ ապահովել: Այս ինստիտուտի փոփոխությունն ու ժամանակակից տեխնոլոգիաների զարգացումը լայն հնարավորություններ են տվել ժամանակակից մուֆթիներին: Արդյունքում ֆաթվաների ծառայություններն համացանցում մեծ տարածում են ստացել: Համացանցում առցանց ֆաթվաներ տալու ծառայություններ ունեն ինչպես ընդհանուր իսլամական մի շարք կայքեր (օրինակ՝ **askimam.org**, **islamonline.net**, **fatwaonline.net**, **fatwa-online.com** և այլն), այնպես էլ մի շարք հայտնի մուֆթիների անձնական կայքերը: Ի դեպ, այս կայքերը բոլորն էլ ունեն մի քանի լեզվով տարբերակներ, մասնավորապես՝ անգլերեն, որն իր հերթին իսլամն «արտահանելու» լավ մեխանիզմ է:

Էրլազեն-Նյուրնբերգ համալսարանի հետազոտող Յ. Կուչերը պնդում է, որ այս ծառայությունների միջև մրցակցություն կա<sup>16</sup>: Առցանց ֆաթվաները միջպետական, միջկառավարական հակամարտությունների միայն տեսանելի մասն են: Այս ֆաթվաները լավագույն միջոցներից են ազդեցության տարածման և հասարակ բնակչության շրջանում հետևորդների ձեռքբերման համար: Այս մրցավազքին մասնակցում են ինչպես պետական, այնպես էլ ոչ պետական մուֆթիները՝ փորձելով իրենց ձայնը հասանելի դարձնել առավել լայն շրջանակների համար: Յ. Կուչերը նաև նշում է. «Մա պայքար է ոչ միայն հայտնի դառնալու,

<sup>15</sup> Brinkley M., "Media Muftis: Radio Fatwas in Yemen". Islamic Legal Interpretation: Muftis and their Fatwas . Ed. Muhammad Masud, and Brinkley Messick, and David S. Powers. Cambridge, MA.: Harvard University Press, 1996, p. 314.

<sup>16</sup> Kutscher J. "The politics of virtual fatwa counseling in the 21<sup>st</sup> century", Masaryk University Journal of Law and Technology, Vol. 3:1, 2009, pp. 33-49.

այլ նաև նպատակադրված քայլ է 9/11-ից հետո իսլամի համար աշխարհում տեղ գտնելու համար, մասնավորապես ոչ իսլամական հասարակություններում, ինչպիսին Արևմտյան Եվրոպան է»<sup>17</sup>:

Իսկ սհա «iMuslims: Rewiring the House of Islam»<sup>18</sup> գրքի հեղինակ Գարի Բունտը գրում է. «21-րդ դարը դարձավ այն ժամանակահատվածը, երբ միավորվեցին երկու դոմինանտ տարրեր՝ իսլամն ու համացանցը: Նմանատիպ միավորումը կարող էր հանգեցնել պայթյունի կամ բաց բանավեճերի»<sup>19</sup>: Իսլամական առաջնորդների կողմից կիբեռտարածության և կիբեռգործիքների օգտագործումն ու հարմարեցումն իսլամին թույլ տվեցին նույն համացանցը օգտագործել իսլամի արտահանման համար:

Ֆաթվայի միջոցով տեղեկատվական-հոգեբանական ազդեցությունը հատկապես հստակ երևաց սիրիական ճգնաժամի համատեքստում, որին կանդրադառնանք ստորև: Բայց մինչ այդ պարզենք, թե ինչ է հոգեբանական-տեղեկատվական պատերազմը:

Հազեբանական պատերազմն ունի ազդեցության տարբեր տեսակներ՝ տեղեկատվական-հոգեբանական, հոգեվերլուծական, նեյրոլեզվաբանական և այլն<sup>20</sup>: Այս ուսումնասիրությունը հիմնականում վերաբերում է այս տեսակներից առաջինին՝ տեղեկատվական-հոգեբանականին:

Հոգեբանական ազդեցության երեք փուլ է առանձնացվում՝ *օպերացիոն, գործընթացային և ավարտական*<sup>21</sup>: Այս փուլերից

---

<sup>17</sup> Նույն տեղում:

<sup>18</sup> Bunt G. R., iMuslims: Rewiring the House of Islam (Islamic Civilization and Muslim Networks), The University of North Carolina Press, 2009.

<sup>19</sup> Նույն տեղում, էջ՝ 275:

<sup>20</sup> Крысько В. Г., Секреты психологической войны (цели, задачи, методы, формы, опыт). - Минск, 1999, стр. 6-8.

<sup>21</sup> Նույն տեղում:



յուրաքանչյուրը, կարելի է ասել, համընկնում է ֆաթվան տալու և դրա ազդեցության տարածման փուլերին, այսպես.

1. Օպերացիոն. հոգեբանական ազդեցություն գործողը կատարում է գործողությունը՝ ֆաթվայի պարագայում սա ֆուլյան է կամ իֆթան, երբ մուֆթիի կողմից պատասխան՝ ֆաթվա է տրվում մուսթաֆթիի հարցին:

2. Գործընթացային. հոգեբանական ազդեցության համար կատարված գործողությունն ընդունվում է, կամ չի ընդունվում: Այս պարագայում ֆաթվայի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումն է: Օրինակ՝ սիրիական ճգնաժամի ընթացքում Սիրիայի և Տրիպոլիի մուֆթիները լիբանանցիներին Սիրիայում ջիհադի գնալու ֆաթվա էին տվել, որը սակայն մերժվել էր պետական մակարդակով: Լիբանանի նախագահ Միշել Սուլեյմանը (2008-2014 թթ.) կոչ էր արել ո՛չ զենքով, և ո՛չ էլ մարդկային ռեսուրսներով չօգնել Սիրիայի ազդեցության տարածմանը<sup>22</sup>:

3. Ավարտական. այս փուլում երևում են պատասխան արձագանքները՝ որպես ազդեցության օբյեկտի հոգեկան վիճակի վերակառուցման հետևանք: Ֆաթվայի պարագայում Սիրիայում այսօր մուջահիդների ներկայությունն է:

Ֆաթվաների պարագայում տեղեկության հավաստիության խնդիր հավատացողների համար չի առաջանում, քանի որ ֆաթվան հիմնավորվում է Ղուրանով, Սուննայով և Իջմայով<sup>23</sup>: Բայց այս համակարգը շատ ճկուն է, քանի որ Ղուրանի նույն այբուբենը տարբեր իրադարձությունների դեպքում կամ անգամ նույն իրադարձության դեպքում հնարավոր է բոլորովին տարբեր մեկնաբանություններ տալ: Սրանով Ղուրանում գրվածը հոյակապ

<sup>22</sup> Ливан отверг фетву, призывающую к джихаду в Сирии. Ст'у՝ <http://centralasiaonline.com/ru/articles/caii/features/main/2013/05/03/feature-02> (մուտք՝ 06. 05.2014):

<sup>23</sup> Structure of the fatwa. Ст'у՝ <http://www.sistersinislam.org.my/news.php?item.1043.41> (մուտք՝ 06.13.2014):

ու հավաստի հիմք է դառնում Ֆաթվաների՝ որպես տեղեկատվական ազդեցության գործիքի օգտագործելու համար:

***Միրիական ճգնաժամի ընթացքում ջիհադի կոչ պարունակող ֆաթվաների օգտագործումը՝ որպես տեղեկատվական-հոգեբանական պատերազմի գործիք***

Միրիական պատերազմը պատճառ դարձավ, որ իսլամի տարբեր ուղղություններին պատկանող մուֆթիներ ամենատարբեր ֆաթվաներ տան:

Միրիական ճգնաժամի ընթացքում ջիհադի կոչ պարունակող ֆաթվաների մեծ ալիք սկսվեց 2013 թվականի մայիս-հունիս ամիսներին: Սա պայմանավորված էր այն հանգամանքով, որ 2013 թվականի մայիսին Հիզբալլահի առաջնորդ շեյխ Նասրալահը հայտարարեց, որ Հիզբալլահի մարտիկները Միրիայում կռվում են Բաշար ալ-Ասադի կողքին և աջակցելու են Միրիայի օրինական ղեկավարությանը մինչև «հաղթական ավարտ»<sup>24</sup>:

Այսպես՝ շեյխ Յուսուֆ ալ-Կարադաուիին<sup>25</sup> 2013 թվականի մայիսի 31-ին դիմում է մուսուլմաններին. «Ես կոչ եմ անում աշխարհի բոլոր մուսուլմաններին օգնել մեր ընկերներին դառնալ հաղթողներ: Եթե ես կարողանայի, ապա ես կգնայի Միրիա՝

---

<sup>24</sup> Hezbollah says Syrian rebels will never oust Assad by force.

Տե՛ս [www.euronews.com/2013/05/01/hezbollah-says-syrian-rebels-will-never-oust-assad-by-force/](http://www.euronews.com/2013/05/01/hezbollah-says-syrian-rebels-will-never-oust-assad-by-force/) (մուտք՝ 05.11. 2013):

<sup>25</sup> Հողվածում հիմնականում նշվում են Յուսուֆ ալ-Կարադաուիի արձակած ֆաթվաները՝ հաշվի առնելով վերջինիս մեծ հեղինակությունն ու մեծ ազդեցությունը արմատական սուննիական աշխարհում: Ալ-Կարադաուիին «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության ոչ պաշտոնական գաղափարախոսն է: Յուսուֆ ալ-Կարադաուիի մասին մանրամասն տե՛ս Տոնիկյան Ս., «Յուսուֆ ալ-Կարադաուիի՝ Թահրիր հրապարակում ունեցած ելույթի շուրջ», Մերձավոր Արևելք. լեզվաբանություն, գրականություն և պատմություն, Երևան, ԵՊՀ, 2013, էջ 31-32:

կովելու: Ցանկացած ոք, ով գիտի սպանել (ընդգծումը-Ն.Ս.), պարտավոր է գնալ Սիրիա: Մենք չենք կարող ձեռքներս ծալած նստել և հետևել, թե ոնց են սպանում մեր եղբայրներին»<sup>26</sup>: Այս կոչի ժամանակ ալ-Կարադաուին ալաուիներին ավելի հերետիկոս է համարում, քան հրեաներին ու քրիստոնյաներին: Նա նաև շատ հետաքրքիր բառախաղ է օգտագործում՝ «Հիզբալլահ»-ի փոխարեն օգտագործելով «Հիզբ ալ-շեյտան»<sup>27</sup> ձևը<sup>28</sup>: Այս ձևը շատ կարևոր ու դիպուկ է և մարդու վրա ազդելու լավ մեխանիզմ է: Այս ելույթի ժամանակ նա նաև հռետորական, բայց միևնույն ժամանակ հոգեբանական առումով մեծ ազդեցություն ունեցող հարց է տալիս. «Ինչպե՞ս կարող են 100 մլն շիաները հաղթել 1,7 մլրդ սուննիներին»<sup>29</sup>:

Ալ-Կարադաուիի կոչից երկու շաբաթ անց՝ հունիսի 15-ին, Սաուդյան Արաբիայի «Մեծ գիտնականների կոմիտեն» նույնատիպ ֆաթվա է տալիս, որտեղ պարսավանքի են ենթարկվում Սիրիական ռեժիմը, նրա աջակիցներ Հիզբալլահը, անգամ Ռուսաստանը և Իրանը, կոչ է արվում Իրանին և Ռուսաստանին՝ վերանայելու իրենց դիրքորոշումը Սիրիայի իշխանությունների նկատմամբ, նշվում է, որ Հիզբալլահի դեմ քայլեր ձեռնարկելը պարտադիր է, և այլն<sup>30</sup>:

<sup>26</sup> Fatwā al-Qardāwī bi-l-jihād li naşra al-islām fi Sūriya. Տե՛ս <https://www.youtube.com/watch?v=EG4ko419QRY> (մուտք՝ 05.12. 2013):

<sup>27</sup> «Հիզբ Ալլահ» արաբերենից թարգմանաբար նշանակում է Ալլահի կուսակցություն, իսկ «Հիզբ ալ-շեյտան»՝ սատանայի կուսակցություն:

<sup>28</sup> Այս բառափոխությանը հանդիպել ենք այլ մուֆթիների խոսքի մեջ ևս, ինչպես, օրինակ, շեյխ Խալիդ Մոսլիհի դեպքում: Մասնավորապես տե՛ս Шейх Халид Муслих о джихаде в Сирии. [https://www.youtube.com/watch?v=boD8r\\_udIzw](https://www.youtube.com/watch?v=boD8r_udIzw) (մուտք՝ 27. 06.2013).

<sup>29</sup> Fatwā al-Qardāwī bi-l-jihād li naşra al-islām fi Sūriya. Տե՛ս <https://www.youtube.com/watch?v=EG4ko419QRY> (մուտք՝ 05.12. 2013):

<sup>30</sup> Hiy՝ a kibār al-՝ulamā՝ tastankir mā yata՝ arđ lahu sha՝ b Sūriya min “Ibāda”. Տե՛ս՝ <http://www.alriyadh.com/846926> (մուտք՝ 26.07. 2013):

2013-ի հունիսին Կահիրեում հավաքվում են մի շարք մուֆթիներ, դարձյալ ալ-Կարադաուլիի գործուն մասնակցությամբ, և ջիհադի կոչով ֆաթվա են տալիս<sup>31</sup>, սակայն ալ-Ազհարի շեյխերը մերժում են այս ֆաթվան ու նշում, որ իրենք չեն մասնակցել այս ֆաթվայի ստեղծմանը<sup>32</sup>:

Իրենց հերթին ֆաթվաներ են տալիս նաև Բաշար ալ-Ասադի կողմնակիցները, այդ թվում՝ պաշտոնական Դամասկոսի գլխավոր մուֆթի շեյխ Ահմադ Բադր ադ-Դին Հասունը, շեյխ Ուասիմ Յուսեֆը և այլոք: Վերջինս մի շարք հետաքրքիր հակափաստարկներ է բերում ալ-Կարադաուլիի ֆաթվային: Նա նշում է, որ «Սիրիայում ջիհադի կոչ են անում այն ժամանակ, երբ իրենք բիզնես-կլասով են ճամփորդում, իրենց որդիները Եվրոպայում լավ ժամանակ են անցկացնում, իսկ ուրիշի որդիներին Սիրիա գնալու են դրդում և այլն»<sup>33</sup>:

Իսկ ալ-Ակսա մզկիթի<sup>34</sup> իմամն իր հերթին դեմ է արտահայտվում Սիրիայում ջիհադի գնալուն: Իմամ Աբու Արաֆան իր ելույթի ժամանակ նշում է, որ որոշ շեյխեր ռադիկալ ֆաթվաներ են տալիս, որոնք կոչ են անում Սիրիայում ջիհադի գնալ: Սակայն դրանք ոչ մի կապ չունեն իրական իսլամի հետ: Պետք է նրանց կեղծ կոչերը բացահայտել: Ապա իմամը հետաքրքիր փաստարկներ է բերում, թե ինչու են այս մուֆթիների ֆաթվաները կեղծ: Նա մասնավորապես նշում է, որ 60 տարուց ավելի է, ինչ Պաղեստինի հողերը օկուպացված են իսրայելցիների կողմից,

<sup>31</sup> Sunni clerics issue fatwa calling for all forms of Jihad in Syria. Տե՛ս՝ [www.middle-east-online.com/english/?id=59461](http://www.middle-east-online.com/english/?id=59461) (մուտք՝ 27.11.2013).

<sup>32</sup> Al-Azhar Institute Refuses Call for Jihad in Syria. Տե՛ս՝ [www.abna.co/data.asp?lang=3&id=429723](http://www.abna.co/data.asp?lang=3&id=429723) (մուտք՝ 19.05.2014).

<sup>33</sup> Āṣḥāḥu ābnāu nā dahiyya li‘ulamā’ al-sūa’ ūa al-fitna. Տե՛ս՝ [https://www.youtube.com/watch?v=ywf\\_Xci2vtw](https://www.youtube.com/watch?v=ywf_Xci2vtw) (մուտք՝ 17. 06.2013).

<sup>34</sup> Ալ-Ակսայի մզկիթը Մեքքայի և Մադինայի մզկիթներից հետո երրորդ սրբավայրն է իսլամում:

հիշեցնում է, որ ալ-Ակսայի մզկիթը, որն իսլամական կարևորագույն սրբավայրերից մեկն է, ենթարկվում է հրեաների բռնություններին, երեք անգամ հրդեհվել է, սակայն այդ նույն մուֆթիներից և ոչ մեկը երբևէ ֆաթվա չի տվել, որով կոչ կաներ ջիհադի գնալ Պաղեստին: Անգամ նշում, է որ այս շեյխերը Վաշինգթոնի ու Թեյ-Ավիվի ագրեսիվ էքսպանսիոն պլաններն են իրականացնում<sup>35</sup>:

Ավելին, իրադրությունն այնքան է խճճվում, որ Սիրիայի մուֆթին ջիհադի է կանչում արդեն ընդդեմ ջիհադականների: Այսինքն՝ ջիհադի ֆաթվային հակադրվում է մեկ այլ ֆաթվա՝ դարձյալ ջիհադի կոչով<sup>36</sup>:

Ֆաթվաների կործանիչ ուժը գիտակցում են նաև քաղաքական գործիչները: 2013թ. նոյեմբերի 29-ին ֆաթվաների վերաբերյալ մեկնաբանություններ էր կատարել Ռուսաստանում Սիրիայի դեսպան Ռիյադ Հադադը՝ ասելով, որ «Սիրիայում արդեն երկուսուկես տարի շարունակ մղվող պայքարում Դամասկոսի հակառակորդների ձեռքին ամենաուժեղ զենքը ֆաթվան է դարձել, որ տարածվում է ՋԼՄ-ների միջոցով: Ֆաթվաները այդքան ահարկու հետքեր են թողնում, քանի որ տարածվում են ՋԼՄ-ների միջոցով, որոնք չունեն սահմաններ»<sup>37</sup>:

Փաստ է, որ իսլամական աշխարհը ոչ միայն բաժանված է հակադիր կողմերի, այլ նաև տարբեր կողմեր, օգտվելով միևնույն տեքստերից՝ Ղուրան, Սուննա, բոլորովին տարբեր եզրակացու-

<sup>35</sup> Имам мечети Аль-Акса: фетвы с призывами к джихаду в Сирии, не имеют никакого отношения к исламу» St`u` <http://www.salamnews.org/ru/news/read/72532> (մուտք՝ 29. 05.2013).

<sup>36</sup> Муфтий Сирии объявил джихад джихадистам. St`u` [www.islamnews.ru/news-138734.html](http://www.islamnews.ru/news-138734.html) (մուտք՝ 20.04.2013).

<sup>37</sup> Фетвы стали самым страшным оружием противников сирийского режима - посол Сирии. St`u` <http://www.salamnews.org/ru/news/read/104580#sthash.9yk0mjMO.dpuf> (մուտք՝ 12.12.2013)

թյունների են գալիս, որը, թերևս կարելի է ասել, որ առավել հարմար է տվյալ կողմի շահերին: Այս իրադրությունում մուֆթիները տեքստերի՝ իրենց հարմար մեկնաբանություններով, փորձում են միացյալ «ումմա»<sup>38</sup> ստեղծել, որը, սակայն, հաճախ չի համընկնում մյուս կողմի պատկերացումներին:

Նույնատիպ մեկնաբանություն է տալիս նաև Իվոն Յ. Հադադը իր «Անապատի փոթորիկ օպերացիան և ֆաթվաների պատերազմը» հոդվածում՝ մեջբերելով Մ. Խալիֆային. «Ոչ միայն մուսուլմանական աշխարհն է մասնատված պատերազմող մասերի, այլ նաև իսլամն է մասնատված պայքարող ու հակասական տեքստերի, իրավագիտության, տեսությունների, կոնցեպցիաների և ֆաթվաների... Երբ տարբեր պետական ու քաղաքական անձինք պայքարում են իրենց սեփական շահերի համար, ուլեմները, կրոնական առաջնորդները, դառնում են սոսկ գործիք ու միջոց այս հեղինակությունների ու առաջնորդների համար, ովքեր օգտագործում են նրանց՝ ի կատար ածելու իրենց մտադրություններն ու հետաքրքրությունները»<sup>39</sup>: Ապա ավելացնում է, որ «նրանք ֆաթվաներ են տալիս՝ համաձայն այս կամ այն ռեժիմի հանդեպ ունեցած իրենց քաղաքական դիրքորոշման»<sup>40</sup>:

Այսպիսով կարելի է եզրակացնել, որ.

- մուֆթիի ինստիտուտը իսլամի ծագումից մեկ դար անց արդեն իսկ սկսել էր օգտագործվել իշխանական մարմինների կողմից,

<sup>38</sup> Ումման կրոնական համայնք է: (Ислам. Энциклопедический словарь, стр. 242)

<sup>39</sup> Haddad, Y. Y. “Operation Desert Storm and the War of Fatwas”. Islamic Legal Interpretation: Muftis and their Fatwas . Ed. Muhammad Masud, and Brinkley Messick, and David S. Powers. Cambridge, MA.: Harvard University Press, 1996, p. 306; M. Khalifa, “The war of fatwas and the fatwas of war”, cited in Haddad.

<sup>40</sup> Նույն տեղում, էջ՝ 307:

- ֆաթվայի՝ Ղուրանով և Սուննայով հիմնավորված լինելու հանգամանքը թույլ է տալիս կրոնական հեղինակություններին այն ծառայեցնել սեփական նպատակների համար,

- համացանցը, ռադիոն ու հեռուստատեսությունը թույլ տվեցին ֆաթվան ծառայեցնել առավել լայն զանգվածների վրա ազդելու համար,

- Սիրիական ճգնաժամի շրջանակներում հնչած ֆաթվաները ցույց են տալիս, որ դրանք քաղաքականացված են և նպատակ ունեն տեղեկատվական-հոգեբանական ազդեցություն գործել ու ֆաթվա տվող կողմի համար որոշակի շահավետ իրադրություն ստեղծել,

- Սիրիայում կովող օտար գրոհայինների առկայությունը, ռադիոհեռուստահաղորդումներում հնչող հարցերը, թե արդյո՞ք կարելի է գնալ Սիրիա ջիհադի», համացանցում կայծակնային արագությամբ տարածվող ֆաթվաներն այս հարցերի շուրջ ցույց են տալիս, որ ֆաթվան դարձել է գործող մեխանիզմ մուսուլմանների մի սովոր գանգվածին նախապես մշակված ուղով տանելու, նրանց գիտակցությունների վրա կրոնական մեխանիզմով ազդելու համար:

## FATWĀ AS AN INSTRUMENT OF INFORMATION- PSYCHOLOGICAL WARFARE (CASE OF SYRIAN CRISIS)

### Summary

*Naira Sahakyan*

The state of affairs during the two world wars in the 20<sup>th</sup> century determined the need of creation of new tools of war. As it turned out afterwards these new tools are not only less expensive ones, but the most effective ones as well. This weapon is the information as a tool for information and psychological influence on masses. Although the information and psychological warfare's history goes far back to ancient times, this phenomenon rapidly developed in the 20<sup>th</sup> century, when information technologies became the dominant forms of mass-communication. Many institutions of Islam tried to fit in this ever-changing world. One of these institutions is the institute of fatwā. During the Syrian crisis it was shown how the fatwās had become dangerous weapons in the hands of the opponents of the Bashar al-Assad's regime. Fatwās are used by many of opposition muftīs in order to influence the masses and to send them to jihad against the Syrian authorities.